

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 05
վիճակագրության պետական խորհրդի նիստի

23.04.2010թ.

ժ.15: 00

Մասնակցում էին՝

Ս.Մնացականյան (*խորհրդի նախագահ*), Գ.Անանյան, Գ.Գևորգյան, Յու.Պողոսյան, Ա.Շաբոյան, Ա.Աղազարյան (*խորհրդի անդամներ*)

Հ. Գրիգորյան (*խորհրդի քարտուղար*)

Հրավիրված էին՝ Լ.Միրզոյան (ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ), Ս. Պողոսյան (*իրավաբանական բաժնի պետ*), Լ. Պետրոսյան (վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի պետ), Դ.Մարտիրոսովա (*տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ*):

Օրակարգի նախագծում՝ երկու հարց.

1. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից՝ 2009 թվականին իրականացված ոչ ֆորմալ հատվածի հետազոտության անվանագրքով տվյալների բազան Ասիական զարգացման բանկին տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

/Չեկուցող՝ Դ.Մարտիրոսովա/

2. Այլ հարցեր

ՀՀ վիճակագրության պետական խորհրդի նախագահի կողմից ներկայացվեց խորհրդի նիստի օրակարգի նախագիծը, որը հաստատվեց ամբողջությամբ և միաձայն:

/Զվեարկության արդյունքները-կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

Լսեցին՝

1. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից՝ 2009 թվականին իրականացված ոչ ֆորմալ հատվածի հետազոտության անվանագրքով տվյալների բազան Ասիական զարգացման բանկին տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

/Չեկուցող՝ Դ.Մարտիրոսովա/

Որոշեցին՝

թույլատրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնին՝ Ասիական զարգացման բանկին տրամադրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից 2009 թվականին իրականացված ոչ ֆորմալ հատվածի հետազոտության արդյունքում ձևավորված անվանագրքով տվյալների բազան՝ գուտ գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար օգտագործելու, այլ անձանց չփոխանցելու, չվաճառելու, չիրապարակելու և այլ կարգով չտարածելու պայմաններով:

/Անհատական/

/Զվեարկության արդյունքները- կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հ. ԳՐԻԳՈՐՅԱՆ